ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՋԱՒԷՆ ԵՒ ՍՈՆԻԱ ԱԳԵԱՆՆԵՐ ՈՐՔ Ի ԿԱԼԻՖՈՐՆԻԱ, ԱՄՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում եւ գնահատանքի խօսքը՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բարեպաշտ, արժանաւոր զաւակներիդ:

ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանից ուրախութեամբ տեղեկացանք ազգանպաստ ու եկեղեցանուէր Ձեր ընթացքի եւ գործոց մասին, որոնք բարեզարդում են Ձեր կեանքի ճանապարհը եւ յարգանք ու պատիւ բերում Ձեր անուանը: Հայրապետիս համար գոհունակութիւն է անդրադառնալ, որ Դուք՝ որպէս ազնիւ բարեգործներ մեր Սուրբ Եկեղեցու, երկար տարիներ Ձեր աւանդն էք բերում ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի պայծառութեանը, սատարում հոգեւոր եւ ազգապահպան ծրագրերի իրագործմանը: Հաւատաւոր հոգով եւ նախանձախնդրօրէն Դուք առատաձեռն սրտարուխ մասնակցութիւն էք բերել առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեաց Մայր տաճարի կառուցման գործում՝ սրանձնելով նաեւ հովանաւորութիւնը եկեղեցու ժողովասրահի: Ձեր հաւատքի եւ եկեղեցասիրութեան վկայութիւն է նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին մատուցած ընծայաբերումը, որ կատարեցիք որդիական սիրով եւ մեր ժողովրդի կեանքում մեր նուիրական հոգեւոր կենտրոնի առաքելութեան կարեւորումով: Գոհութիւն ենք մատուցում Բարձրեալին, որ շնորհիւ Ձեզ պէս նուիրեալ ու յանձնառու հայորդիների ազնիւ ներդրումների, ջանքերի ու անսակարկ ծառայութիւնների՝ արգասաւորուում է մեր Սուրբ Եկեղեցու փիրաւանդ առաքելութիւնը եւ այսօր նոր արդիւնքներով քաղցր պտուղներ է պարգեւում մեր կեանքին:

Ձեր եկեղեցասէր ու ազգասէր ոգու եւ մեր Եկեղեցուն ու ժողովրդին բերած տարիների Ձեր վաստակի բարձր գնահատանքով, ընդառաջ ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի առաջնորդի խնդրանքին, շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Շ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Աղօթում ենք առ Բարձրեալն Ասպուած, որ բարեխօսութեամբ երանեալ Սրբոց Ղեւոնդեանց Իր Ամենախնամ Աջի ներքոյ պահի ու պահպանի Ձեզ, հանապազ օրհնութիւն ու երջանկութիւն բաշխի ընտանեկան Ձեր յարկից ներս՝ շնորհելով նորանոր յաջողութիւններ ազգանուէր ու եկեղեցաշէն Ձեր բարի գործերին:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Հոկտեմբերի
Յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ.
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 691